

Կ՛գրադի : Գերձակ Ֆրանսացիներու նեա տեսնուելէն Ֆրանսերէնն ալ կ'ուսանի նեազնեառ և Բարիզ երբալու ցանկութիւնը կ'ունենայ : 1846 ին է որ կը մեկնի հոն և քանի մը տարի կը շարունակէ իր արհեստը : — 1850ական բուսականին Արամեանը կը տեսնենք դերձակութենէ քաշուած և ինքզինքը տուած փորագրութեան ու վիճագրութեան արհեստներուն . այդ օրերուն է որ կը նրատարակէ նայերեն ձեռագիր քերթիկ մը : Յետոյ իր մտասեւեռումը կ'ըլլայ նայկական ձոխ տպարան մը բանալ , նայ տառերը գեղեցկացունել՝ եւրոպականներուն մերձեցունելով զանոնք : Կ'աշակերտի Բարիզի նշանաւոր տպագրիչներէն Վ.պոտե.ի (Պոնարաւոք փողոց , թիւ 44) և արհեստն անոր քով կատարեալագործելով՝ նեաամուտ կ'ըլլայ առաջագրած նպատակին : Երկար աշխատելէ վերջ ձուլարան մը կը հիմնէ և կը ննարէ շարուածքով ու տեսքով գեղեցիկ այն տառերը — տեսակով աչազան — որոնք մինչեւ այսօր իր մականունովը կը յորջորջուին : Մեծագիր բուզքի վրայ տպագրեալ այդ տառերուն մեկ ցուցակը ձեռք անցուցած ըլլալով , տեղեկացանք թէ իր ննարածները կը յանգին 73 պատկառելի թիւին , այլ եւ այլ «րունք»ներով , գլխագիր ու բոլորագիր միասին նաշուելով : Անա՛ նոյն ցուցակին մէջ նշանակուած գիւններուն ցանկը . — **Գիւն մարց .** — Թիւ 1-5 , նաոր 10 ֆր. : Թիւ 6-7 , 14 ֆր. : Թիւ 8 , 19 , նաոր 5 ֆր. : Թիւ 20-21 , նաոր 8 ֆր. : 22-60 , նաոր 5 ֆր. : 61-66 , նաոր 7 ֆր. : 67-69 , նաոր 8 : 70-73 , նաոր 12 : — **Գիւն ձիւնալ ? «առից .** — Թիւ 1-21 , պնդանիւր , թիւն 14 ֆր. : 22-28 , 8 ֆր. : 29-38 , 10 ֆր. : 39-51 , 11 ֆր. : 52-61 , 12 ֆր. : 62-66 , 13 ֆր. : 67-69 , 18 ֆր. : 70-73 , 24 ֆր. : «Իսկ նասարակ նիւթովները՝ ֆր. 7-14 : — Այս վայելուչ ու սիրուն գիրերը զանազան ժամանակներու մէջ նայ գրածուիչներ ընդօրինակած և ձեւափոխած են մասամբ : Արամեան «Մասեայ Աղանի»ի անդրանիկ թիւին մէջ սապեա պարզած է փորձ գրածուիչի իր նայեացքը . — «Արուեստից մէջ եղած նորաձեւութիւնները 2 տեսակ կրնան բաժնուիլ . մեկը առ ի զարդ և ի գեղեցկութիւն , մեկայը յօգուտ և ի դիւրութիւն : Գեղեցկութեան ու զարդի նամար անբիւ փոփոխութիւններ եղած են մեր նայերէն գրերուն ձեւին վրայ . նին ձեռագրաց մէջ՝ **ձագագիր , մարդագիր , ծաղկագիր , կենդանագիր** բուածներէն մինչեւ մեր օրերուն վայելուչ գեղագրութեանց մէջի ձեւերը : Իսկ դիւրութեան և օգտի նամար՝ յայտնի է թէ Մետրուպեան **երկարագիր** տառերը նեազնեառ կ'ըտրութիւննին կորսնցնելով՝ քառակուսի ձեւ առեր , մանրցեր , փոխուեր են , մինչեւ նիմակուան **ցօս** ու **չգագիր** բուած ձեւերը առեր են . որով նին երկարագրէն գրերէ նոյնչափ նեուացեր են՝ որչափ Արարացոց գիրը երբայականն , յատիւր յունարէնէն , ուստը կ'ըրեղեան գրերէն : Քանի որ մեր ազգին մէջ տպագրութեան արուեստը մուտ , ժի-ժի դարերուն գրուած ձեռագիրներուն գեղեցիկ **բոլորագրերը** օրինակ եղան տպագր. գրերուն : Ատոնց մէջ ալ թեպէտ Ռսկան վարդապետին Անդղերտով փորագրել տուածները աւելի նաճոյ և ընդունելի եղան իրաւամբ՝ քան թէ նոյն ատենները Վլենտիկ , Հոովմ , Կ. Պօլիս և Մարսիլիա փորագրեալները , բայց ընդհանրապէս ամենն ալ մեկ ձեւի , մեկ ոճի վրայ ըլլալով , նոյն գեղեցկութիւնն ու պակասութիւններն ամենուն վրայ ալ կը տեսնուին : Այս պակասութեանց գլխաւորները 4 նառ երեցեր էին մեզի , եւրոպացոց գեղեցիկ ու կանոնաւոր գրերուն նեա բաղդատելով . նախ՝ ուղղանայեաց գրիւք կեննալու տեղ (ինչպէս որ երկարագիր գլխագիրը կը կեննայ՝ առանց մեկզին ծուելու) , բոլորագրոյն դէպ ի առջեւ պատկած՝ շղագրի ձեւով կեննալը : Այս դիրքը ոչ միայն սպեղութիւն կու տայ գրերուն , — մանաւանդ երբ գլխագրի , նօտը գրի կամ եւրպ. գրի քով նանդիպին , — այլ և կարդալու դժուարութիւն կը պատճառէ և աչքը շուտ կը յօգնեցնէ : Բ. Գրերէ ամեն գրերուն ալ քառակուսի ձեւ մը ունենալը . որով թեպէտ միակերպութիւն մը կ'առնէ իրենց իրարու քով շարուածքը , բայց այս միակերպութիւնը չափի դուրս ըլլալուն՝ գեղեցկութիւն մը չի տար , կը ձանձրացընէ , կարդալու ալ դժուարութիւն կը պատճառէ՝ մանաւանդ նոր սորվողներուն : Գ. Մեկ քանի գրերուն իրարու սաստիկ նման ըլլալով՝ մեկմեկու նեա շփոթիլը . որով շատ նամրակներ եղը եզ կը կարդան , եղնիկը եզնիկ , դառիքը գառիք , խառոքը խառոք , գաղտնագուշակը գաղտնագուշակ են : Գ. Քանի մը գրերուն պատճառաւ տպագրութեան մէջ քաշուած դժուարութիւնները . որով նարկ եղած է շատ մը **ձոցագիր** ննարիկ որ **պոչաւոր գրերուն** քով նանդիպած ատեննին՝ նեաու չմնան անոնցմէ . այսպիսի են Պ , Բ , Է , Ղ , Զ , Ը , Չ , Վ : Գարձեալ , քանի մը գրերուն վերի կամ վարի ձայրերուն չափէն աւելի դուրս երկրնալը . որով իրենց քովի գրերէն նեաու կը մնան՝ թէ որ բաժուածքին մէջ այն ձայրերը կապարին լայնքէն դուրս չեղեն . իսկ երէ դուրս ելլեն՝ անդալար կը կուտրոնի .